ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ,,ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ,,ՊՈԱԿ

Գյուղ Ղազանչի 25.08. 2023թ.

ՀՀ ԿԳՄՍ նախարարի աշխատակազմի

գլխավոր քարտուղար

տիկին՝ Հ. ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Հակոբյան

Տեղեկացնում եմ Ձեզ առ այն, որ 2023-2024 ուստարվա մեկնարկին ՀՀ Շիրակի մարզի ,,Ղազանչիի միջնակարգ դպրոց,,ՊՈԱԿ-ում առաջացել է ,,Կենսաբանություն,, և ,,Հասարակագիտություն,, առարկաների ուսուցչի թափուր աշխատատեղ և հայտարարվում է մրցույթ:

Կից ներկայացնում եմ մրցույթի հայտարարությունը:

ՀՀ Շիրակի մարզի ,,Ղազանչիի միջնակարգ

Դպրոց,,ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Մ. Խաչատրյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՂԱԶԱՆՉԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ *05805177*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Շիրակի մարզի «Ղազանչիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ,,Կենսաբանություն,, առարկայի (10 դասաժամ) և ,,Հասարակագիտություն,, առարկայի (7 դասաժամ) ուսուցչիչների թափուր տեղի համար: Մրցույթի մասնակիցների գիտելիքների եւ մասնագիտական կարողությունների ստուգումն անցկացվելու է երկու փուլով՝ գրավոր և բանավոր՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված հարցաշարերի: Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝

1. Հանձնաժողովի անունով գրավոր դիմում՝ նշելով այն աշխատատեղը, որին հավակնում է (Ձեւ 1),

2. Փաստաթուղթ (դիպլոմ)՝ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի պահանջին համապատասխան որակավորման վերաբերյալ,

3. Անձնագրի պատճենը,

4. Ինքնակենսագրություն (Ձեւ 4),

5. Թափուր աշխատատեղը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքներին եւ աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի, հավաստագրերի պատճենները (դրանց առկայության դեպքում),

6. Մեկ լուսանկար՝ 3x4 չափի,

7. Այլ պետությունների քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունք,

8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաեւ զինգրքույկ:

Փաստաթղթերի պատճենները պետք է ներկայացնել բնօրինակների հետ:Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից՝ օգոստոսի 29-ից մինչև սեպտեմբերի 12-ը ներառյալ ժամը 10.00-ից 15.00-ն բացի շաբաթ և կիրակի օրերից : Փաստաթղթերի ընդունումը կանցկացվի՝ ըստ կարգի: Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 15-ին ժամը 14.00-ին Շիրակի մարզի ,,Ղազանչիի միջնակարգ դպրոց,,ՊՈԱԿ-ում :

Տեղեկությունների համար զանգահարել՝ (098) 542372 հեռախոսահամարով: